

տրոսի (ի Հյկզ.): Անշուշտ նաեւ ապոռիստ մտոյ կամ թոչնոց (Թիւք, ԺԱ, 32), եւ աղծեալ կամ ապիստեալ ձկան (Քրոն. Ա, 130): Վերջապէս՝ գէթ ազնուականի ամբարանոցին մէջ պիտի գտնուէր ձերն ալ, արդիւնքը հանրածանօթ « ձիթենւոյն » (Եզն. 207. Ագթ. 479), որ եթէ հին ժամանակներն հազիւ Ուտի գաւառին մէջ կը բուսնէր (Խոր. 610), — ըստ որում Ծնորհալին կ'ըսէր Ալեքսի՝ թէ «ի Հայաստանեայց աշխարհն ոչ են ձիթենիք վասն ցրտութեան օդոցն», եւ թէ մեռոնն անգամ կը պատրաստէին «ի բուսարեր ձիթոց՝ զոր շուշմայ (կնճիթ) անուանեն» (Ընդհ. 62), — սակայն անտարակոյս Հայաստան ունէր անոր ներածութիւնը, եւ յետոյ ծառն ալ բազմացուց իւր հողին վրայ. այսպէս Ժ. դարուն Տաթեւի շրջակայքն արդէն ունէին «ձիթենիս» (Որբ. 185). եւ շատերը կը մշակէին «բուրաստանս ձիթենեաց» (ՅՏ. կթդ. 250): Բայց յայտնի է՝ թէ երկու տեսակ իւղերն ալ կը մտնէին հայ կերակրոց մէջ (Կիր. 75, 171. Հայբուս. 321). մանաւանդ թէ երեք տեսակ. ձիթենւոյն, կնճիթին եւ կտաւատին (Գոշ՝ Առկ. 44): Եւ գիտենք՝ որ ի հնուց «զեղուի» Հայոց «հնձանք գինւոյ եւ իւղոյ» (Սահ. 111):